ամենայն երկիր. զոր մարգարէացաւ Ագաբոս՝ Գործոց 11. 28։ Յայնմ ժամանակի և սուրբ Առաքեալն Պետրոս՝ ՚ի Հռոմ գնաց. և ԻԵ. ամ անդ եկաց։

Ներոն՝ սկսաւ յամի Տեառն ԾԴ. ինքնակալեաց ամս ԺԴ. և ամիս Ը։ Սա էր յոյժ պճնասէր և էշխինեայ*)։ Սա զմի շօրն Բ. անգամ ոչ զգեցաւ. և զոտնամանն ՚ի պատուական ականց և մարգարտէ ագանէր. միշտ ՚ի ձկնորսութիւն շրջէր. և ուր նստէր աւազէր, և ձայնաւորս եղանակէր ՚ի մէջ պատուականաց և նուաստից։ Սա առաքեաց զՎեսպիանոս զօրօք ՚ի վերայ Երուսաղէմի։ Սա սպան զմայրն իւր, և զեղբայրն և զՍենեքա վարդապետն իւր. զի աշակերտեցաւ առաքելոյն։ Սա սպան զսուրբ առաքեալն։ Սա շինեաց ապարանս բազմածախս՝ ՚ի յոսկոյ և յարծաթոյ, ՚ի փղոսկրէից և յապանեոսից։ Սա արար զա-

(*) Զարագործ. անզգամ։